ՎԱՐԴԱՆ ՕԶՆԵՑԻՆ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ 1795—1797 ԹԹ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԿԱՏԱՐԱԾ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ռ. Տ. ՏԻՏԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարանի հարուստ ժողովածուի 4331 թվահամարի տակ պահվում է Վարդան Օձնեցու «Սոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի մեծի և փոքուս խորագիրը կրող ձեռագիր աշխատությունը։

Սակայն առ այսօր անհայտ են մնացել նույն հեղինակի գրչին պատկանող ներքոհիշյալ ձեռագիր աշխատությունները. 1. «Անցք Վարդան արքեպիսկոպոսի Օձնեցւոյ և ճանապարհորդութիւն նորա ի Հայաստան ի Տաճկաստան և ի Կիլիկիայ», 2. «Արձանագրութիւնք Անի քաղաքի եկեղեցեաց և վանօրէից Շիրակ և Արշարունի գաւառաց», 3. Օձնեցու «Պատմութիւն» ձեռագիր աշխատության սեպագիր օրինակը, 4. Ադիգյողալ բեկի «Ղարաբաղ նամէ» աշխատության հայերեն համառոտ թարգմանություն։ Վերջապես, Օձնեցու գրչին են պատկանում նաև № 8822 ձեռագրի վերջին մի քանի էջերը, ոչ պակաս հետաքրքրություն ներկայացնող մի վավերագիր «Յաղագս պատճառաց բացման պատերազմին ռուսաց ընդ օսմանցիս» խորագրով։

Նշված ձեռագիր աշխատություններին մենք կանդրադառնանք մի այլ առիթով. այս հոդվածով ցանկանում ենք ներկայացնել այն նյութերը, որոնք գտնվում են Մատենադարանում պահվող №№ 4331 և 8822 ձեռագրերում և վերաբերում են 1795—1797 թթ. պարսիկների Անդրկովկաս կատարած արշավանքներին։

№ 8822 ձեռագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ այն բաղկացած է երկու տարբեր հեղինակների գործերից, որոնք Մատենադարանում դրվել են մի թվահամարի տակ։ Ձեռագրի առաջին մասը պատկանում է Օձնեցու գրչին, որի 1—18 թերթերը պարունակում են նրա «Պատմութիւն» աշխատության գիտական առարկայական ցանկը, որը և ունի հետաքրքիր բնույթ։ Հեղինակը իր «Պատմութեան» միջից ցանկի ձևով դուրս է գրել այն, ինչ համարել է կարևոր և ուշադրության արժանի ու նշել աշխատության էջերը. թեմաները ըստ գլուխների երբեմն չեն համընկնում, բայց բոլոր դեպքերում համապատասխանում են աշխատության էջերին։ Այս ցանկը պարզապես ամփոփում է ձեռագրի բովանդակությունը և մեծապես օգնում ուսումնասիրողին։ Նշված ձեռագրի 23—87 թերթերը Օձնեցու «Ճանապարհորդութիւնն» է. այս աշխատությունը ձեռք է բերված 1937 թ. Ախալցխայից, պրոֆ. Կ. Ղաֆադարյանի գլխավորած հնություններ հավաքող արշավախմբի միջոցով։

Նույն թվահամարը կրող ձեռագրի երկրորդ մասը (88—190 թերթերը) վերնագրված է «Պատմութիւն Գ. Արել արքեպիսկոպոսի Մխիթարեան, գիրք Չորրորդ ի 1809 ամէ ց 1865 ամն»։

---

1 Անվանի պատմաբան Լեոն իր «Հայոց պատմության» III հատորը շարադրելիս օգտվել է Օձնեցու «Պատմութիւն հայոց» ձեռագիր աշխատությունից, իբրև սկզբնաղբյուր XVIII դարի վերջին քառորդում հայ ժողովրդի մղած ազատագրական շարժումներին վերաբերող հարցերի լուսաբանման կապակցությամբ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» 1945 թ. № 6-ում զետեղված է պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի հաղորդումը Օձնեցու «Պատմութիւն» ձեռագիր աշխատության մասին, ուր տրված է այդ աշխատության հակիրճ բովանդակությունը։

Մատենադարանի «Բաներեր»-ի № 4-ում տպագրված՝ բանասեր Առատուր Մնացականյանի «XVIII դարում գրված հայ-ռուսական դաշնագրության երկու նախագծերի գնահատման հարցի շուրջը» խորագրով հոդվածում և Վ. Գրիգորյանի «Երևանի խանությունը XVIII դ. վերջում» ուսումնասիրության մեջ նույնպես օգտագործված է Օձնեցու հիշյալ ձեռագիր աշխատությունը։

2 Այս աշխատության մասին նույն ձեռագրում արված է հետևյալ ծանոթագրությունը. «Սրա սկիզբն ու վերջը գտնվում է Ամատունի Սահակ վարդապետի մոտ. որա համառոտութիւնը հրա-

Վարդան Օձնեցու «Պատմութիւն...» ձեռագիր աշխատության և նրա արտաքնապես կենսագրական և որագրություն թվացող «Անապարհորդութեան...» մեջ արժեքավոր փաստեր են արձանագրված XVIII դարի և XIX դարի առաջին կեսի ընթացքում Հայաստանի ու հարևան երկրների սոցիալ-տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների մասին։ Նրա այս աշխատությունները արժեքավոր են իբրև ականատես ու ականջալուր հեղինակի գործեր։ Վարդան Օձնեցին նշում է, որ «Պատմութեան» նյութերի ուսումնասիրություններ ձեռնամուխ է եղել 1847 թ., հավաքել է բազմաթիվ փաստեր բանիմաց մարդկանցից ու ականատեսներից, օգտագործել է մի շարք հիշատակարաններ, տարեգրություններ, զանազան անձանց նամակներ, կաթողիկոսների ու պատրիարքների կոնդակներ, որոնք գտել է Հայաստանի տարբեր քաղաքներում ու վանքերում (Թիֆլիսի, Գանձակի, Հաղպատի, Սանահնի, Ճարսի, Կոստանդնուպոլսի, Կիլիկիայի, Սեբաստիայի[3])։

Ակներև է նաև, որ Վարդան Օձնեցին իր «Պատմութիւնը» շարադրելիս իբրև սկզբնաղբյուր առատորեն օգտվել է 1795—1797 թթ. պարսիկների Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակակից ադրբեջանցի հեղինակ Միրզա Ադիգյոզալ բեկի «Ղարաբաղ նամէ» (Ղարաբաղի պատմություն) աշխատության հայերեն թարգմանությունից, որը ներկայումս պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում, 4463 թվահամարի տակ։ Օձնեցու պատմության հինգերորդ գլուխը սկսվում է հետևյալ խոսքերով. «Այսուհետև մնայ մեզ քաղել ի գրուածոց ժամանակակից պատմիչ պարսիկ Միրզայ Ադի Գեօզալի, որ սկիզբն արարեալ է գրել զանցս և սկզբնաւորութիւնս Սարուջայ ասացեալ տիրող խանից Ղարաբաղու»[4]։ Վարդան Օձնեցու «Պատմութեան» և Միրզա Ադիգյոզալ բեկի «Ղարաբաղ նամէ» աշխատության այն գլուխների համեմատությունները, որոնք նվիրված են Ագա-Մուհամմադ խանի Անդրկովկաս կատարած արշավանքին, բերում են այն հաստատման, որ Վ. Օձնեցին օգտվել է Միրզա Ադիգյոզալ բեկի «Ղարաբաղ նամէ» աշխատության ոչ թե պարսկերեն բնագրից, այլ նրա հայերեն թարգմանությունից։ Այստեղից եզրակացություն՝ կամ Օձնեցին ինքն է թարգմանել այդ գործը և կամ իր ձեռքի տակ է եղել նրա հայերեն թարգմանություն, որից և տեղ-տեղ օգտվել է բառացիորեն (տե՛ս Վարդան Օձնեցու «Պատմութեան», էջ 83 և Միրզա Ադիգյոզալ բեկի «Ղարաբաղ նամէ», էջ 17)։ Մենք հակված ենք կարծելու, որ այն թարգմանված պետք է լինի Վ. Օձնեցու կողմից, երբ վերջինս Շուշի և Գանձակ քաղաքներում վարում էր հոգևոր տեսչի պաշտոն։

Այսպիսով, օգտագործելով իրեն հայտնի բոլոր սկզբնաղբյուրները, Օձնեցին թողել է ուշագրավ աշխատություններ, որոնցում արծարծված հարցերը կամ նորություն են, կամ հավաստում են պատմական այս կամ այն իրողությունը և կամ լրացնում ու լուսաբանում են պատմագրությանը հուզող զանազան խնդիրներ։

* * *

1783 թ. Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկի ամրոցում կնքվում է ռուս-վրացական դաշնագիրը, որով ամրանում էին Ռուսաստանի դիրքերը հարավում, իսկ Վրաստանը, ընդունելով ռուսական կայսրության հովանավորությունը, թոթափում էր պարսից դարավոր լուծը։ Այդ հանգամանքը խիստ անհանգստություն ու մտահոգություն է պատճառում Ռուսաստանի թշնամիներին՝ թուրքական սուլթանին ու պարսից շահին, ինչպես և նրանց թիկունքում կանգնած մեծ տերություններին՝ Անգլիային ու Ֆրանսիային։ Սրանք չհանդուրժելով ռուսական դիվանագիտության հաջողությունները Արևելքում, հրահրում են Թուրքիային ու Պարսկաստանին՝ օգտվելու ռուս-պարսկական հակասություններից, դժվարություններ ստեղծելու ռուսների համար, նրանց դեմ ոտքի հանելով ռուսական սահմանների մահմեդական բնակիչներին, Կովկասյան լեռնականներին[5]։

պարակված է նախ Մոսկվա, Մսեր Մագիստրոսի ձեռքով, ապա Թիֆլիս՝ Ալեքսանդր Երիցյանի միջոցով. Սրել արքեպիսկոպոսի Պատմութիւնը պարունակում է իր մեջ 1765 թվականից մինչև 1882 թվականը՝ Սիմոն, Ղուկաս, Դավիթ, Դանիել, Եփրեմ, Հովհաննես, Ներսես, Մատթեոս և Գեորգ Դ. կաթողիկոսների օրերը։ Թե ում կողմից և երբ է գրված այս ձեռագրությունը, հայտնի չէ։

3 Տե՛ս Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 3։

4 Մատենադարան, ձեռ. № 4463, էջ 35բ։

5 Տե՛ս А. Р. Иоаннисян, Французское посольство в Иране 1796 г. («Советское востоковедение», № 1, 1956, էջ 162); О. Марков, Присоединение Грузии к России в 1801 году («Историк-марксист», М., 1940, № 3, էջ 62).

Դեռևս 1783 թ. վրաց Հերակլ թագավորը Պետերբուրգում գտնվող իր որդուն ուղղված նամակում դանդատվում էր, որ Ախալցխայի փաշան չի դադարում վրաց ժողովրդին տեհանգստացնելուց, հրահրում է Դաղստանի լեզգիներին, որոնք հարձակումներ են գործում, ավերում են երկիրը, գերեվարում բնակչություն։ Հերակլը հանձնարարում է իր որդուն բանակցությունների մեջ մտնել, ոուսաց արքունիքի հետ, որպեսզի վերջինիս օգնությամբ կանխվեն Ախալցխայի փաշայի ոտնձգությունները վրաց ժողովրդի նկատմամբ[6]։

Այդ նույն ժամանակներում էր, որ Սուլեյման փաշան գաղտնի բանակցությունների մեջ էր մտել Ավարայի Ումմա-խանի հետ, կաշառում և դինամիտներ էր մատակարարում, գրգռելով նրան ընդդեմ անդրկովկասյան ժողովուրդների[7]։

Ահա այս իրադարձությունների մասին մեր պատմական գրականության մեջ պահպանված սակավաթանակ փաստերը հավաստվում են նաև Վարդան Ձնեցու մեզ թողած հետաքրքիր տեղեկություններով։ Վերը նշված նրա ձեռագիր աշխատություններում բազմաթիվ հիշատակություններ կան երկրում տիրող անապահով վիճակի մասին. «Յորում ժամանակի լեռնականքն Կովկասու լեզկիքն խումբ-խումբ մտանէին ի Հայաստան,— գրում է նա,— և զողարար յափշտակէին զմանկունս նորա, որով բարգավաճէր վաճառականութիւն գերեաց ի Տաճկաստան և ի Պարսս»[8]։

Խոսելով լեռնականների կողմից Լոռվա մի շարք գյուղերի ավերման մասին, Ձնեցին գրում է. «Իայց շուտ ժամանեաց աւերումն գիւղօրէից Կողէսայ և Ծղիտանքայ ի Կովկասականացն»[9]։

Նույն դավառի ազգաբնակչության համար ստեղծված քաղաքական ու անտեսական ծանր վիճակի մասին են վկայում Ձնեցու հետևյալ խոսքերը. «...միշտ անհանգիստ էին յառպատակութենէ զեկաց... դաւուրս իւրեանց անցուցանէին օձնեցիք ի ֆարաժայոս և յամուրս Ջաթին տաղայ որ հանդէպ Ձնոյ կայ յարևելից կուսէ»։

Խոր ընկալելով ժամանակի դառնությունը, Ձնեցին բացականչում է. «Աւաղ ժամանակին, հողագործութիւն լոնալ էր յահէ զեկաց և Թարաքամայ թուրքաց, որք անդադար յափշտակէին մինն զմարդիկք և միւսն զեղինս, զրեթէ ապրէին մարդիկք վայրենի սրսովք և մեղերք քարանձանճի, սակաւք էին որք կարող էին պահել զանասունս և վարէին սերմանէին և հնձէին ահիւ և երկիւղիւ»[10]։

«Պատմութեան» մեջ նա առավել հանգամանորեն նկարագրում է կաշառված լեռնականների ավերածությունները Ալավերդու պղնձահանքերում ու նրա շրջակա բազմաթիվ գյուղերում։ «Օմար խան[11] գումարեալ զվեց հազար տաղստանցի հեծելազօրս էանց ընդ Կուր գետ ի դաշտն Գազայ (Վաղուխ) և անդէն յուսեալ ընդ Զորոփորաւ ի Խոշորեի, եմուտ ի պղնձահանքն Ախտալի կոչեցեալ մերձ ի Հաղբատ, ուր ժողովեալ էին ի շրջակայ տեղեաց բազմութիւն արանց ու կանանց աշխատէին ի գործ պղնձոյ, և արծաթոյ, առեալ զամենայն հարստութիւնս հանքիցն այնմիկ, զերի վարեաց զամենեսեան զրնակիչս նորա որ բոլոր մեծի մասին էին յազգէն հայոց և յունաց, քակեցին զմասն ինչ ի հոյակապ շինուածոց եկեղեցւոյն Ախտալիոյ, հուր հարեալ այրեաց զտունս և զամենայն շինուածս ապարանից և տանց նոցա. որք կան աւերակ մինչև ցայսօր։ Ապա ինքն անցեալ զօրօք և զերեօք ընդ ձորամէջս։ Կայաւն բերդի թողեալ զՀաղբատ և զՍանահին վասն ամրութեան նոցա և ամրութեան տեղեացն. անցեալ եստեւ ի գիւղն Օձուն զաւուրս ինն. անդէն ասպատակ սփռեալ զզօրս իւր ի շրջակայ գիւղօրայս հայոց Գսեղա, Շնողնայ. Սանահնայ և այլոց, որքան և ձեռնհաս գտաւ գերեաց ի նոցանէ զրագումս ի փախստէիցն միայն. որք ոչ էին ի Սղնախի. իսկ ի շրջակայ գիւղօրէից բազմութիւնք հայոց Սղնախ արարեալ ի Կրխտարա գօտից ասացեալ տեղւոջ քարափամիջին Գսեղայ և այլք սփռեալ յամուրս քարաժայռից Ջաթինտաղայ պահեցին զանձինս ի զերութենէ զեկաց։ Իսկ Օման խան յետ մեալոյ ինն որ ի հայրենի գիւղն իմ Օձուն, առեալ զամենայն գերիս իրրև մի հազար անձինս ահա և զայն. և զամենայն աւար նոցա էանց ընդ հովիտս Լոռու Ջիլդիդուղ ասացեալ տեղեաւ, եմուտ յամուրս Տայոց ի քաղաքն Ախալցիխայ ուր վանուռեալ զնոսա հազարացոց (թուրքերին— Ռ. Տ.) ինքն դարձաւ ամենայն զօրօք ի Տաղստան»[12]։

---

6 А. А. Цагарели, Грамоты и другие исторические документы XVIII столетия, т. II, вып. II, СПб, 1902, էջ 87։

7 Տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դ. 2-րդ կեսին։

8 Մատենադարան, ձեռ. № 8822, էջ 25ա։

9 Նույն տեղում, էջ 25ա—25բ։

10 Մատենադարան, ձեռ. № 8822, էջ 26։

11 Ավարայի Ումմա-խանին Ձնեցին սխալմամբ անվանում է Օմար խան։

12 Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 70ա։

Օձնեցու այս նկարագրությունն ամբողջանում է Բուտկովի հետաքրքրական հուշերով այն մասին, թե ինչպես այդ ժամանակ Վրաստանում գտնվող սակավաքանակ ռուսական զորքերը հետապնդում են Ումմա խանի հրոսակախմբերին։ Այս մասին նա գրում է. «1785 թ. սեպտեմբերի 22—29-ը մենք կանգնած էինք անշարժ, որովհետև սենեարին էր ամբողջ զորամասերով տեղնել դժվարին ու անտառապատ կիրճերով, հատկապես հրետանու համար անանցանելի ճանապարհներով հակառակորդը կանգնած էր Ախթալայում։ Մենք սպասում ու հետապնդում էինք, թե ուր է ճանապարհվելու։ 26-ին հակառակորդը, խուսափելով ռուսների հետ կռվի մեջ մտնելուց, ձգվեց դեպի վեր Դերեսի եզերքով, նույնպես դժվարին ու անանցանելի կիրճերով, Լոռու բերդի և Ռոմխեթի ճանապարհով և կանգ առավ Ուզունլար գյուղի մոտ, մեզնից 45 վերստ հեռավորության վրա։ Նրանք հրդեհի մատնեցին Լոռու գյուղերը, հացը, խոտը և այն ամենը, ինչ հնարավոր էր ոչնչացնել»[13].

Նկարագրված դեպքերը հավաստված են նաև Հարություն Արարատյանի ուսուցիչ, դեպքերի ժամանակակից Հովհան Ոսկերչյանի կողմից. «Իսկ զկնի երից ամաց դառնալոյ Հերակլոյ ի Երևանա,— գրում է նա,— Օմի խանն լեզկեաց ժողովեալ զԿովկասեան զօրս իւր ԼՌ (30000) և դիմէ ի Վրացտուն և զանց արարեալ կրազում գաւառօք հասանի ի մատանն Լօռւոյ որ մերձ է երկու ժամու ճանապարհի Սանահնու և Հաղպատուս»[14]։ Այնուհետև Ոսկերչյանը պատմում է, թե ինչպես Մատանի բերդ—ամրոցը 8 օր պաշարելուց հետո Ումմա խանը հրամայում է իր զորքերին, որ նրանցից յուրաքանչյուրը մոտակա անտառից մի խուրձ փայտ բառնալով իր ուսերին, տանի թափի ամրոցի պարիսպների տակ։ Երբ այս միջոցով ստեղծված նոր պատնեշը բարձրանում է և հավասարվում ամրոցի պարսպին, նրա զորքերը դրոհով մտնում են ամրոց, սրախողխող անում մերձակա գյուղերից հավաքված և այնտեղ ապաստանած ողջ բնակչությանը։ Այս կռիվների ընթացքում իրենց արիաբար են դրսևորում հույները, որոնց Ումմա խանը անխնա ոչնչացնում է։ Լոռում կատարած ավերածություններից հետո Ումմա խանը ավարն ու գերիներին առած շարժվում է Ախալցխա՝ Սուլեյման փաշայի մոտ, ապա հարձակվում Վրաստանի Վախտամի կոչվող բերդի վրա, հրի ու սրի մատնում այն, գերեվարում կանանց ու երեխաներին։ Ջմեռելով Ախալցխայում, Ումմա խանը գարնանը դիմում է վրաց Հերակլ արքային, խնդրելով թույլ տալ Վրաստանի վրայով վերադառնալ իր երկիրը, սակայն Հերակլից մերժում ստանալով, արշավում է Երևանի վրա։ Քաղաքն անմարդաբնակ էր, նրա բնակիչները, լսելով Ումմա խանի վայրագ արշավանքի լուրը՝ ամրացել էին Երևանի բերդում, երկրի անմատչելի վայրերում. նրա զորքերը մտնելով Աշտարակ գյուղը, նույնպես այն անմարդաբնակ են տեսնում, որովհետև սարսափահար ժողովուրդը մտել էր թաքստոցներ։ Այստեղ նրանց հաջողվում է բռնել մի քանի այգեպանների, որոնց և գերեվարում են։ Այդպես, ահա, Ումմա խանն իր զորքերով անցնում է Շուշի, որտեղից էլ վերադառնում է Ավարա[15]։

Պատմական սկզբնաղբյուրները մեզ հնարավորություն են տալիս շատ ավելին ասելու կովկասյան լեռնականների կողմից անդրկովկասյան երկրների վրա կատարած հարձակումների, ավերածությունների, գերեվարությունների ու կողոպուտների մասին։ Այս ամենը, ինչպես ասվեց, տեղի էր ունենում Թուրքիայի թելադրանքով ու նրա թիկունքում կանգնած Անգլիայի ու Ֆրանսիայի դրդմամբ և ուղղված էր Ռուսաստանի արևելյան քաղաքականության դեմ։ Այս հարցը թեև դուրս է մեզ հետաքրքրող խնդրի շրջանակներից, սակայն գրավում է մեր ուշադրությունը այնքանով, որքանով կապված է 1795—1797 թթ. պարսից արշավանքի նախօրյակին Անդրկովկասում ստեղծված տնտեսական ու քաղաքական ծանր վիճակի հետ։

XVIII դարի վերջում անդրկովկասյան ժողովուրդներին մտահոգում էին ոչ միայն կովկասյան լեռնականների անընդմեջ հարձակումները, ավերածություններն ու ավարառությունները, այլև պարսից Աղա-Մուհամմադ խանի կողմից սպառնացող ահավոր վտանգը։ Վարդան Օձնեցին պատմում է, թե ինչպես 1795 թ. պարսիկների Անդրկովկաս կատարած արշավանքի նախօրեին Լոռու բնակչությունը Ղազախի բնակչության հետ միասին շարժվում է դեպի Թիֆլիս, վերահաս վտանգից փրկվելու հույսը կապելով վրաց թագավորության հետ։ Փախստականների մեջ էին նաև Օձնեցու ծնողները, որոնք «առեալ դուստր Մարիամ անուն վեց ամսեայ հասակի 1795 ամին տեսան փախեան ընդ բնակչաց Ղազախու յահէ Մահմատ շահի ի սահմանս Քարթ-

---

1. Տե՛ս П. Б. Бутков, Материалы новой истории Кавказа с 1722 по 1803 г., часть вторая, СПБ, 1863, էջ 181—187։

14 Հ. Ոսկերչյան, Յիշատակարան ազգային արդեան պատմութեան, «Կռունկ հայոց աշխարհին», 1862, № 4, էջ 281։

15 Նույն տեղում, էջ 283—286։

լայ»[16]։ Նա միաժամանակ արձանագրում է և այն տխուր փաստը, թե ինչպես վրաց ֆեոդալներն օգտագործում էին այդ առիթը՝ փախստականներին ճորտացնելու համար. «...Յորոց բաղումք ոչ ևս դարձան անտի մինչև ցայսօր, որոց զորդիս և թոռունս իշխանք և ազնուականք վրաց արարին իւրեանց իբրև արծաթագին ծառայ (ճորտ), որը մինչև ցայսօր կան մնան ի նոյն անկապ կապունս Տոռանց»[17]։

Աղա-Մուհամմադ խանի Անդրկովկաս կատարած արշավանքին Օձնեցին նվիրել է իր «Պատմութիւն հայոց» ...աշխատության երկու գլուխները («Յաղագս մտանելոյ ի Հայաստան ներքինի Մահմատ խանի, աւերութեան և գերութեան Թիֆլիս քաղաքի» և «Վասն գնալոյ Աղա Մահմատ խանի ի Պարսկաստան և դառնալոյ ի Շուշի և սպանման նորա անգ»)։

Թեև Օձնեցին անմիջականորեն ականատես չի եղել իր նկարագրած իրադարձություններին և դրանցից հեռու է մի քանի տասնամյակով, բայց նրա պատմությունն ունի սկզբնաղբյուրի անվերապահ արժեք։ Պատմությունը շարադրված է խնամքով, ականատես ու ականջալուր մարդկանց պատմածների հիման վրա։ Այսպես, նա գրում է, որ իր կողմից ներկայացվող այս պատմությունն արել է նաև Հաղպատի վանքի միաբան Պետրոս վարդապետը, Շնող գյուղից, որն այդ օրերին դտնվել է Թիֆլիս քաղաքում[18], ապա փախել Հաղպատի վանքը, ուր և մահացել է 1846 թ., 80 տարեկան հասակում։ Այսպես, ուրեմն, վարդապետը դեպքերին ականատես էր. Թիֆլիսի ավերման ժամանակ նա եղել էր 29 տարեկան, որից հետո ապրել էր ևս 51 տարի։ Այս վարդապետի մասին Օձնեցին գրում է. գերեվարվածների թվում էր 10-ամյա մի աղջիկ, որը լեռը բարձրանալու ժամանակ ուշաթափ ընկնում է գետին. գերողները հարկադրում են վարդապետին շալակել աղջկան և բարձրացնել լեռան գագաթը[19]։

Վերը բերված հավաստիացումները մեզ իրավունք են տալիս Աղա-Մուհամմադ խանի Անդրկովկաս կատարած 1795—1797 թթ. արշավանքների մասին Վարդան Օձնեցու մեզ թողած նկարագրություններ համարել մեր ժողովուրդների պատմության այդ դրվագը ներկայացնող լավագույն աղբյուրներից մեկը։ Այժմ անդրադառնանք փաստերին։

* *

Հայտնի է, որ XVIII դարի վերջում Պարսկաստանի ֆեոդալական տները բաժանվել էին երկու հիմնական խմբի՝ հյուսիսային Իրանում՝ Ղաջար ցեղի գլխավորությամբ, հարավային Իրանում՝ Զենդ ցեղի գլխավորությամբ։ Այս երկու խմբավորումների միջև տեղի ունեցած երկարատև գահակալական կռիվներում հաղթող է հանդիսանում հյուսիսայինը։ Ղաջար ցեղի հաղթանակը սովետական պատմագրությունը բացատրում է հետևյալ իրողությամբ[20]։

Դարավերջում որոշակի է դառնում Իրանի հյուսիսային նահանգների տնտեսական առաջավոր գերը, որտեղից արտահանվում էին մետաքսի հումք և բամբակ։ Այդ նահանգների վրայով էին անցնում քարավանային ճանապարհները, որոնք Թուրքիան ու Ռուսաստանը կապում էին Միջին Ասիայի երկրների հետ։ Այստեղ էին գտնվում Կասպիականի նավահանգիստները. այստեղ էր կատարվում առևտուրը Պարսկաստանի հետ։ Օրավուր ընդարձակվող առևտրական կապերը Ռուսաստանի հետ մեծ նշանակություն է ստանում հյուսիսային Իրանի տնտեսական կյանքի հետագա զարգացման համար։ Իրանի հարավային նահանգները, չնայած Քերիմ խանի ջանքերին, չկարողացան հասնել այնպիսի վիճակի, որի մեջ գտնվում էին նրանք մինչ աֆղանների ներխուժումը։ Այդ ժամանակ Պարսից ծոցից արտահանվող ապրանքներն այն նշանակությունը չունեին, ինչ առևտուրը Ռուսաստանի հետ, հետևապես հյուսիսային Իրանի ֆեոդալներն ավելի հարուստ և ուժեղ էին դարձել, քան հարավային շրջանների ֆեոդալներն էին, և Աղա-Մուհամմադ խան Ղաջարը զենդերի դեմ վարած պայքարի ընթացքում կարող էր հենվել անհամեմատ մեծ նյութական միջոցների, հետևապես մեծ ռազմական ուժի վրա, քան նրա հակառակորդները՝ տնտեսական իր նշանակությունը կորցրած հարավային Իրանի կառավարողները[21]։

Անդրադառնալով Աղա-Մուհամմադ խանի զենդերի դեմ վարած կռիվներին, Օձնեցին գրում է. «Յաւուրս այսոսիկ յետ երկար պատերազմելոյ Մահմադ շահի ընդ Շիրազու, առնու զՔիրման

16 Մատենադարան, ձեռ. № 8822, էջ 7։

17 Մատենադարան, ձեռ. № 3441, էջ 86ա—86բ։

18 Կայծենի, ըստ Օձնեցու՝ Շնող գյուղ, տե՛ս Վ. Օ ձ ն ե ց ի, Պատմութիւն, էջ 88բ։

19 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 88բ։

20 Տե՛ս «История Ирана с древнейших времен до конца XVIII века», Ленинград, 1958, էջ 327—328։

21 Տե՛ս И в а н о в, Очерк истории Ирана, Москва, 1952, էջ 113։

քազաք նորա, աւերէ զնա հրով, և զամենայն բնակիչս նորա ի սուր մաշէ զէութիւն խանն Շիրազայ, ձերբակալ արարեալ հանէ զիրկու աչս նորա. պատուհասեալ կուրացուցանէ զնա և ամենայն գերդաստանեօք աժէ զնա կապանօք ի Թեհրան. նուաճեալ սպառեաց ի սպառ թագաւորազինս Շիրազայ, որք էին ի թուանց Նատր Շահի և սկսաւ հարստութիւն ազգին զաչարաց ի Պարսկաստուն ի սոյն ներքինի աղայ Մահմատ խանէն»[22]։ Այսպիսով, Ագա-Մուհամմադ խանը պարսից գահին տիրելուց ու երկրի ներքին խռովությունները վերջնականապես ճնշելուց հետո իր առաջնահերթ խնդիրն է համարում վերականգնել Իրանի տիրապետությունը Անդրկովկասի խանությունների ու վրաց երկրի վրա։ Այդ նկատառումներով Պարսկաստան են հրավիրվում ոչ միայն Երևանի, Նախիջևանի, Ղարադաղի, Նուխու, Գանձակի խաները, այլև անվերապահ հպատակություն է պահանջվում Ղարաբաղի Իբրահիմ խանից ու վրաց Հերակլ II թագավորից։ Նրան է ներկայացվում մի վերջնագիր, որով պահանջվում է խզել բարեկամական հարաբերությունները ռուսների հետ, ճանաչել Իրանի տիրապետությունը, հակառակ դեպքում, ասված է վերջնագրում, «կարշավենք Վրաստան. կթափենք ռուսների ու վրացիների արյունը, որից կստեղծենք Կուր գետի նման մի գետ»[23]։ Այն մասին, որ Ագա-Մուհամմադ խանը Պարսից գահին տիրանալուց ու երկրի ներքին գործերը փոքր ինչ կարգավորելուց հետո նախապատրաստվեց նվաճելու անդրկովկասյան ժողովուրդներին, Օձնեցին գրում է. «Սա մաքրեալ զՊարսկաստուն ամենայն հակառակաց իւրոց դիմեաց զօրու ծանու ի Հայաստան Դարձ. կարգէ անդ զեղբայր իւր Ալի-Ղուլի խան կուսակալ ի վերայ հայոց և ուղեորէ զնա ի վերայ Երևանայ երկոտասան հազար զօրօք առ ի հնազանդեցուցանել զիշխեցողս այնր կողմանց, որք նախապէս հպատակեալ էին ինքեան, և ապա ապստամբեալ, մտեալ էին ընդ լծով Հերակլ արքային վրաց։ Եւ ինքն անցանէ Արդաւիլ և Սիւնիք և յԱրցախ գաւառս»[24]։ Օձնեցին պատմում է նաև, թե ինչպես, երբ լուր է ստացվում Ալի-Ղուլի խանի Հայաստան մտնելու մասին, Ղուկաս կաթողիկոսը շտապում է փրկել Էջմիածնի վանքի ունեցվածքը։ Նա այն բաժանում է երկու մասի, մի մասն ուղարկում է Թիֆլիս, իսկ մյուս մասը՝ Կարս, հուսալով, որ եթե մեկը կորչի, գոնե մյուսը կփրկվի, մինչև որ Ագա-Մուհամմադ խանի հրոսակախմբերը կհեռանան իր երկրից։ Սակայն ստացվում է այնպես, որ Թիֆլիս ուղարկածը թալանվում է պարսիկների կողմից, իսկ Կարս ուղարկված թանկագին ակնեղենները յուրացնում են տեղի հոգևորականությունն ու իշխանները և միայն մնացած անարժեք իրերն են վերադարձվում Էջմիածին։

Մեծ արժեք են ներկայացնում Վարդան Օձնեցու տեղեկությունները պարսիկների 1795 թ. արշավանքի մասին Երևանի խանության վրա, տեղեկություններ, որոնց չենք հանդիպում մեզ հայտնի և ոչ մի սկզբնաղբյուրում։ Նա գրում է, որ Արարատյան երկիրը մտած զորավար Ալի-Ղուլի խանը Երևանի խանից՝ մանկահասակ Մուհամմադից պահանջում է հնազանդություն, սակայն Երևանի խանը և երկրի ավագանին որոշում են դիմադրել թշնամուն, մեծ հույսեր կապելով նաև վրաց Հերակլ II արքայի օգնության հետ։ Ժողովուրդը պատրաստվում է պաշտպանողական մարտերի. նրա մի մասը հավաքվում է Երևանի բերդում, թվով 7000 հոգի, մնացած մասը ամրանում է անմատչելի վայրերում՝ լեռներում ու քարանձավներում, պատրաստվելով պարտիզանական կռիվների[25]։

Օձնեցին գրում է, որ Պարսից զորքերը, մտնելով Արարատյան դաշտը, կերակրվում էին Էջմիածնի և նրա շրջակա գյուղերի կողմից մատակարարվող պարենամթերքներով[26]։

Ուշագրավ տեղեկություն է հաղորդում Օձնեցին այն մասին, որ Ագա-Մուհամմադ խանի զորքերի Արարատյան գավառ մտնելու և այնտեղ կատարած անօրինությունների ամբողջ պատմությունը Ղուկաս կաթողիկոսը դրի է առել և ուղարկել է Պոլսի պատրիարք Զարարիային, խնդրելով վերջինիս հրատարակել այն։ Մինչդեռ պատրիարքը ավելի դիվանագետ դտնվելով, պատասխանել է Ղուկաս կաթողիկոսին, որ քաղաքական մթնոլորտը նպաստավոր չէ, ուստի պետք է հրաժարվել այդ փաստերը հրապարակելու մտքից, որը կործանարար կարող է լինել իր ժողովրդի համար[27]։

Չկարողանալով գերազանց ուժերով ընկճել տեղի բնակչության դիմադրությունը և գրավել Երևանի բերդը, Ալի-Ղուլի խանն իր դայրույթը թափում է Արարատյան գավառի գյուղերի ու

22 Մատենադարան ձեռ. № 4331, էջ 79։

23 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», выпуск 29, Тифлис, 1901, էջ 147—148։

24 Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 79ա—79բ։

25 Տե՛ս նույն տեղում, էջ 83բ—84բ։

26 Տե՛ս նույն տեղում, էջ 85ա։

27 Նույն տեղումն էջ 85ա։

բնակավայրերի անմեղ բնակչության վրա. «Իսկ Ալի-Ղուլի խան սարդար յետ բազում անգամ յորդորելոյ զխանն Երեանայ դալ ի հնազանդութիւն շահին, և ընդդիմանալոյ նորա զայրացեալ յոյժ պատերազմեցաւ ընդ բերդականացն Երեանայ զաւուրս ինչ, և անդէն սփոեալ զզօրս իւր յԱյրարատ գաւառ ասպատակեաց զամենայն երկիրն Դարոնոյ առ Հրազդան գետով քանդեալ աւերեաց զշինուածս տանց և հուր արկեալ այրեաց զամենայն արմտիս երկրի նոցա, զոր յայնմամ հնձեալ դիզեալ լինէաք»։

* *

1795 թ. ամռանը Աղա-Մուհամմադ խանը 33 օր պաշարելով Շուշի ամրոցը, չկարողացավ գրավել այն. նա գործադրեց բոլոր հնարավոր միջոցները՝ հարձակում, սպառնալիք, դիվանագիտական միջոցներ և այլն, սակայն անսասան մնացին բերդում հավաքված ու համախմբված հայ, վրացի ու ադրբեջանցի մարտիկները։ Օձնեցին, նկարագրելով բերդի կայազորի և բնակչության հերոսական դիմադրությունը, ուշագրավ մանրամասնություններ է հաղորդում նաև բնակչության այն հատվածի դառն ճակատագրի մասին, որը չկարողանալով ամրանալ բերդում, ապաստան էր գտել բերդը շրջապատող խոր ու անմատչելի կիրճերում։

Շուշվա պատերի տակ կրած իր պարտության համար Աղա-Մուհամմադ խանը վրեժխնդիր է լինում անզեն ժողովրդից. իրեն հատուկ խարդախությամբ նա հաշտության պատրվակի տակ իր մոտ է հրավիրում կիրճերում թաքնված բնակչության ներկայացուցիչներին, թվով 52 մարդ. որոնց անմիջապես կալանավորում ու բանտ է նետում, իսկ բնակչությանը խարեությամբ կարողանում է բռնել և քշել Պարսկաստանի խորքերը. արտաքսված ժողովրդի մի մասին հետագայում հաջողվում է մեծ տառապանքների գնով կրկին դառնալ իրենց բնակավայրերը։ Արցախեցի մի ծերունու պատմածի հիման վրա Օձնեցին նկարագրում է, թե ինչպիսի հերոսական պաշտպանողական ճակատամարտեր են մղել բերդում պաշարված 60 հայ մարտիկները, որոնք գուրս գալով բերդից, հանկարծակի հարձակումներ էին գործում թշնամու վրա՝ մեծ կորուստներ ու զոհեր պատճառելով վերջինիս։ «Ի պաշարել բերդին յամրացելոյ անտի հայոց ի բերդն վաթսուն արք կորովիք, հետևակք և սուսերամերկք բազում վնաս և տառապանս հասուցանէին արքունի ղօրաց պարսից հարկանելով յափշտակէին զպաշար և զկարասիս զօրաց նոցա. որոց յոյժ վշտացեալ Մուհամմադ Շահ հրամայէ ամենայն զօրաց իւրոց որք էին իբրև ութսուն հազար ամենայն արքնութեամբ ի դարան մտանել և ածէ ընդ բռամբ զվաթսունս։ Ապա հազիւ թէ կարացին այնպէս զերեսունս ի նոցանէ սպանանել և երեսունքն փախեալ ամրացան ի բերդն»[29]։

Ավանդարար պատմում են, որ երբ Աղա-Մուհամմադ խանին չի հաջողվում գրավել Շուշի բերդ-ամրոցը, նա Իբրահիմ խանին է ուղարկում իր բանակում գտնվող սեյիդ Մուհամմադ Ուրֆի կոչվող բանաստեղծի հետևյալ պարսկերեն քառյակը.

Տեպան ՐեզՐաւրենՐ յերկնից բաբանաց.
Այլ դու յիմաւեալ կաս ընդդիմակաց.
Յայդ ի յապակի ի նիւթ դիւրաբեկ
Պահել զսմբուրիւն փախուստ պարսպեաց։

Իբրահիմ խանը իր պալատական բանաստեղծ Մոլլա Փանահին հանձնարարում է գրել պատասխան, որը նույն թղթի մյուս երեսին գրում է հետևյալ երկտողը և ետ ուղարկում.

Զի թէ նա է պաճասպան իմ զոր ես գիտեմ,
Զինչ ի ծոց Ռաբանց պահէ ոչպէս դիտեմ[30]

Աղա-Մուհամմադ խանը համոզվելով, որ անհնարին է Շուշիի գրավումը, որոշում է առժամանակ թողնել այն և Գանձակի վրայով շարժվում է դեպի Վրաստան։

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ վրաց Հերակլ արքան ու Ղարաբաղի Իբրահիմ խանը, ինչպես և Անդրկովկասի այլ խաներ, դաշն էին կնքել ընդհանուր ուժերով գիմադրելու

28 Նույն տեղում, էջ 85ա—85բ։

29 Նույն տեղում, էջ 80ա, 80բ։ Տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. № 2734, էջ 15։

30 Նույն տեղում, էջ 83ա, տե՛ս նաև Մատենադարանի № 4463 ձեռագիրը՝ «Որպիսութիւնք խանացն Գանձակայ», էջ 17—22, ինչպես նաև Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабахского ханства с 1747 по 1865 года, Шуша, 1901, էջ 24

Աղա-Մուհամմադ խանին[31], «Քանզի արքան Հերակլ — գրում է Օձնեցին,— որ ժողովեալ էր զինգետասն հազար վրացի, հայ և տաճիկ (իմա՝ ադրբեջանցի—Ռ. Տ.) զօրս բանակ եղեալ նստէր ի վերայ Իջնայ գետոյ, չունէր վասն նոցայ բաւական պատրաստութիւն պաշարաց, վասն այն հրաման ետ հայոց և տաճկաց ես և ոմանց վրացւոց երթալ ժողովել յամուր տեղիս զինչս և զգերդաստանս իւրեանց, պահելով առ ինքն միայն զվեց հազար զօրս ի վրացւոց»[32]։

Աղա-Մուհամմադ խանի Անդրկովկաս կատարած արշավանքի նախօրյակին Վրաստանը ապրում էր տնտեսական ու քաղաքական ճգնաժամ։ Ֆեոդալական անընդմեջ ընդհարումների հետևանքով, մասնավորապես արքայորդիների կենտրոնախույս ձգտումների պատճառով, Հերակլ արքան հնարավորություն չունեցավ կազմակերպել երկրի ռազմական ուժերը՝ թշնամուն հակահարված տալու համար[33]։ Ինչպես ժամանակակիցներից շատերը, Վարդան Օձնեցին ևս մեղադրական խոսքեր է ասում Հերակլ արքային ու նրա ողջ տոհմին՝ երկրի պաշտպանության հարցերով ժամանակին չմտահոգվելու համար։

Ավելին, Հերակլ արքայի ու վրաց ավագանու կողմից այնքան էին թերագնահատված թշնամու ուժերը, որ ժողովրդի մեջ արհամարհանք գոյություն ուներ դեպի նա։ Այդ ևս չի մոռանում հիշել մեր հեղինակը. «Բայց բնակիչք Տփխիս քաղաքի ոչ ինչ համարելով զարհաւիր և զերկիւղ Արքային պարսից, ծաղր առնելով զնա յարմարեալ ի վերա նորա զերգս կատականաց ասէին Մահմուդ խանն Գալիսայ, Ներքինի և Լալիսայ։ Այսպէս քամահարելով զնա, մոռացեալ էին զահ և զերկիւղն Աստուծոյ, վասն զի եկեալ հասեալ էր ի վերա նոցա օր բարկութեանն Աստուծոյ, բայց նոքա ննջեալ ի քունս մեղաց իւրեանց ոչ զդաստացեալ ապաշաւէին փոխանակ հսկման և աղօթից ի գինարբուս վաճառաց և ի թատերս խաղուց վազէին, մինչև եհաս ի վերայ զկատարած նոցա ողբալի օրինակաւ որպէս լուիցես»[34]։

Հերակլ II-ը որոշում է թշնամուն դիմադրել Ինջա կոչվող գետի վրա, բայց որովհետև Ղազախի ու Շամշադինի բնակիչները հեռացել էին իրենց բնակավայրից, մի հանգամանք, որ կարող էր դժվարացնել վրաց զորքի պարենավորման գործը, նա թողնում է Ղազախ-Շամշադինը և ամրանում Թիֆլիսի պարիսպների տակ. «Վասն այսորիկ թողեալ զկամուրջն կոտրած փութացեալ մտին ի քաղաքն Տփխիս ամրափակեցին զկիրճս քաղաքին վառեալ ամենեքեան ի ռազմ»[35]։

Մինչ Աղա-Մուհամմադ խանի Թիֆլիս քաղաքին մոտենալը բնակչությունը խուճապի էր մատնվել. շատերը, անցնելով Կովկասյան լեռները, փախչում էին դեպի Մոզդոկ քաղաքը, մի մասն էլ՝ Ախալցխայի ու Ղարսի կողմերը։ Խուճապին նպաստեց և այն, որ թագուհի Դարիան շտապեց դուրս գալ քաղաքից ու թաքնվել Անանուրի լեռներում։ Յուրաքանչյուրը մտահոգված էր իր անձի փրկությամբ և աշխատում էր որքան հնարավոր է հեռու մնալ ռազմական գործողությունների թատերաբեմից։ Օձնեցին գրում է. «...Միանգամայն հրաման տուեալ (Հերակլը— Ռ. Տ.) գերդաստանաց պալատի իւրոյ և ամենայն բնակչաց Տփխիս քաղաքի զի որ ոք և կամեցի ելեալ ի Տփխիսայ գնասցէ յամուր տեղիս Վրաստանա. ելեալ յայնժամ Դարիայ թագուհին վրաց ի Տփխիսայ ամենայն գերդաստանօք իւրովք ամրացաւ ի լեառն Թրիալեթ, գնացին ընդ նմայ սակաւք ոմանք ի քաղաքացեանց անտի»[36]։ «Յայնժամ ելանէ ընդդեմ նորա Հերակլ արքայ վեց հազարաւ կացուցեալ յաջ թևին զքաջ Սպարապետն Օրբելեանց զԹամազ էշիկաղասպաշին ի ձախմէ զթնդանօթապետ զօրաց զԴաւիթ թոռն իւր որդի Գէորգայ որդւոյ իւրոյ անդրանկանն և ինքն Հերակլ ունէր զմիջին կողմն թիկնապահօք»[37]։

Սկսվում է ահեղ ճակատամարտ վրաց ու պարսից զորամասերի միջև։ Չնայած անհավասար ուժերին, վրաց զորամասերը (հատկապես առաջապահ գունդը) հերոսաբար պաշտպանվում են՝ տեղ-տեղ անցնելով հակահարձակման։ Այդ ճակատամարտում վրացիները չորս անգամ հետ են շպրտում պարսիկների գրոհները, իսկ երբ արքայազն Վախթանգի առաջնորդությամբ մարտի մեջ են մտնում Արագվայի ափերի բնակչությունից օգնության հասած խիզախ մարտիկները, վրացիներին հաջողվում է նույնիսկ մտնել թշնամու զորամասերի մեջ, հասնել դրոշակակիրներին և Աղա-Մուհամմադ խանի աչքի առաջ վերցնել դրոշակներից մի քանիսը։ «...Այսպէս սկսաւ

---

31 Мирза-Адигезаль-Бек, Карабаг-Наме, Баку, 1950, էջ 77։

32 Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 83ա։

33 Г. В. Хачапуридзе, К истории Грузии первой половины XIX века, Тбилиси, 1950, էջ 41։

34 Նույն տեղում, էջ 86։

35 Նույն տեղում, էջ 86բ։

36 Նույն տեղում, էջ 85բ—86ա։

37 Նույն տեղում, էջ 86բ—87ա։

զօրք սաստիկ հարուածս հասուցանէր Հերակլ այնքան բազմութեան զօրաց պարսից և ի ծերութեան հասակի անձամբ զմարտն մճարէր»[38]։

Սակայն, ինչպես ասվեց, վրաց թագավորի և մերձավորների հանցանքով բարձիթողի էր արվել երկրի պաշտպանության դործը, դրան գումարած և այն, որ ռուսները չէին շտապում կատարել իրենց խոստումը՝ համաձայն 1783 թ. կնքված փոխադարձ օգնության պայմանագրի։ Ուստի և մարտերը վերջանում են թշնամու հաղթանակով. «...և տեսեալ զտկարութիւն զօրաց իւրոց տարակուսեալ ընդ կրունկն յետս փախչիլ հնար էր զի ի պահու առաւօտու մինչև մերձ Երեկոյ անդադար զմիմեանս հարկանէին, զի ծերութիւն նորա ոչ ներէր նմայ այնքան»[39]։

Աղա-Մուհամմադ խանի համար անսպասելի էր վրացիների այդքան արիարար կռվելը. օրվա վերջում նա հարկադրված է լինում մարտի հանել Մազանդարանի պահեստային զորամասերը, կազմակերպում է պատժիչ ջոկատներ, հրամայում ոչնչացնել այն զինվորներին, որոնք կփորձեն կրունկ ցույց տալ, մի այլ դեպքում փորձում է կաշառել, խոստանալով ավար ու գերիներ[40]։

1795 թ. սեպտեմբերի 12-ին (հին տոմարով) պարսիկների դեմ մղված առաջին ճակատամարտում փաստորեն հաղթող են հանդիսանում վրացիները։ Ճակատամարտից հետո, Երեկոյան դեմ, երբ մառախլապատ երկինքը պարզվում է, Կոջոր լեռան վրա գտնվող պարսիկներին հայտնի է դառնում վրաց զորքի սակավաքանակ լինելու փաստը. ոգևորված, նրանք Սոլոլակի վրայով թափվում են քաղաք։ «Եւ մերձ երեկոյեան,— գրում է Օձնեցին — յանկարծ անցեալ ի բաց մղեաց հողմն զմառախուղն մթապատ և երևեցաւ զտկար զօրութիւնս վրաց... և զօրք վրաց յոյժ սակաւաթիւ, որ իսկոյն փութացեալ ծանուցանեն արքային պարսից և զօրաց նորայ, որք քաջալերեալ զմիմեանս շրջապատեն լերամբ Կօձորայ ձախթեն զօրաց պարսից անկեալ ի վերայ աջ կողման վրաց ուր էր հրամանատար սպարապետն Օրբէլեանց պատառեալ զնոսա ընդմէջ ի փախուստ դարձուցանեն, զոր տեսեալ Հերակլ արքայ աճապարեաց զանձն ապրեցուցանել դարձուցեալ զերեսս ի փախուստ, որոց զ'հետ մտեալ պարսիկք մինչև ի դուռն քաղաքին գնացին ի Սէյդարաթ, բայց փակեալ տեսին զայն դարձեալ անդրէն զառ ի վեր վազելով ի կողմն Սօլոլակի։ Իրրև զկարկուտ թափեցան ի քաղաքն ընդ դուռն թափի-թաղի որ բաց թողեալ էր վասն անդէն ելանելոյ և փախչելոյ քաղաքացւոց։ Իսկ Հերակլ արքայն վրաց փախուցեալ սակաւ արամբք Լանց ընդ կամուրջն ի Հալուրար և անդէն անցեալ փութանակի գիւղն Դուշէթայ»[41]։

Ներխուժելով քաղաք, Աղա-Մուհամմադ խանի զորքերը վախենում են գիշերել այնտեղ. նրանք թողնում են քաղաքը, վերադառնում Սոդանլուղ, ուր կենտրոնացած էին նրանց գլխավոր ուժերը։ Հաջորդ օրվա լուսաբացին վերսկսվում է գրոհը. պարսիկները մտնում են քաղաքը, սվերում այն և բնակիչներից շատերին գերեվարում։

Հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում Օձնեցին Թիֆլիսից գերված ժողովրդի ճակատագրի մասին։ Աղա-Մուհամմադ խանը, ինչպես խոստացել էր նախապես, գերիներին բաժանում է իր զինվորներին, որոշ մասը իր հետ տանում է Իրան, մի մասն էլ վաճառվում է Երևանում, Կարինում, Ախալցխայում և այլուր։ Այսպես, օրինակ՝ Էջմիածնի վրայով գերիներին տանելու ժամանակ Ղուկաս կաթողիկոսն ու Էջմիածնի միաբանները փրկագնում են 80 գերիներ։ Պարսիկները գերեվարում են նաև Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդ Մարտիրոս վարդապետին, ուրում Երևան, այստեղ նրան ճանաչում է մի ոմն տաճիկ Հաջի Ջաֆար անունով, ազատում է վարդապետին և ուղարկում Էջմիածին, սակայն նա մեռնում է Էջմիածին չհասած, Հոիփսիմեի վանքում։ Օձնեցին խոսում է նաև Թիֆլիսից գերեվարվածների քանակի մասին, որը համոզիչ դարձնելու համար վկայակոչում է Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի տեղեկությունը. «Եղև թիվ կոտորածի բնակչաց Տփխիս քաղաքի ի հայոց և վրաց ութ հազար անձանց և գերելոցն տասն և վեց հազար, հաւաստին սորա հաշուեալ ի տիպ արձանացոյց Յովսէփ արքեպիսկոպոսն Արղութեանց ի տպարանի Նոր Նախիջևանայ, Ռուսիոյ 1797 ամի զոր ոչ կարացաք ի ձեռս բերել»[42]։

Յոթ օր Թիֆլիսը ավերելուց և կողոպտելուց հետո Աղա-Մուհամմադ խանը թողնում է այն և իր զորքերով շարժվում է դեպի Մուղանի դաշտը՝ ձմեռելու։ Իջեանելով այստեղ, նա իր մոտ

---

38 Նույն տեղում, էջ 87ա։

39 Նույն տեղում, էջ 87ա։

40 Տե՛ս նույն տեղում, էջ 86բ։ Տե՛ս նաև „Очерки истории СССР" (XVIII в., вторая половина), М., 1956.

41 Նույն տեղում, էջ 87ա—87բ։

42 Նույն տեղում, էջ 89բ։

է կանում Երևանի խանին. և որովհետև ընդունված չէր ձևոնունայն ներկայանալ, ուստի «առնու Մահմատ խան (Երևանի—Ռ. Տ.) ի Ղուկաս կաթողիկոսէն գրնծայս վասն շահին գերկու հարիւր թուման և գեօթն ջորիս, որ յետ յօժարութեամբ իւրով և ինքն պատրաստեալ գրնծայս ելեալ գնաց ի կոչ շահին ի Մուղան. մատոյց շահին գրնծայս իւր և կաթողիկոսի որոշեալ անուամբ և ընկալեալ ի նմանէ զպատանդ կին և զորդի իւր և գիշխանութիւն երկրին Արարատայ դարձաւ յԵրևան»[43]։ Վերադառնալով Երևան, Երևանի խանը հայտնում է կաթողիկոսին, որ ինքը շահին խոստացել է ևս 100 ուղտ, որից 14-ը պետք է տա կաթողիկոսը։

Մուղանի դաշտում Ագա-Մուհամմադ խանը ձեռնամուխ է լինում իր նվաճողական պլանների իրագործմանը. «Տարածեաց ձեռն իւր ի վերա Շամախու և Նախուայ՝ որ ասի Շաքի—Շիրուան հնազանդեցուցանել զնոսա»։ Բայց նշված վայրերի բնակիչները, ասում է Օձնեցին, ժամանակին ամենայն պատրաստութեամբ մտել էին իրենց ամրոցները Պարսից զորքերի կողմից նրանց պաշարելն անօգուտ է անցնում և երբ Ագա-Մուհամմադ խանի զորքերին չի հաջողվում նվաճել նշված ամրությունները, նրանք այրում և ավերում են անապատան վայրերը և վերադառնում են Մուղան[44]։ Շամախու և Նուխու համար մղած մարտերում կրած պարտությունից հետո Ագա-Մուհամմադ խանը ցասկոտ հրամայում է՝ «կապեալք ձեռօք և ոտիւք պրկել ի գետնի զվնց հարիւր ցաւագար և ծերացեալ գերիս զոր ընդ ինքեան ածեալ էր ի Տփխիս քաղաքէ, տա գնոսա անդ սմբակոխ առնել ձիոց և ջորոց մինչև ոգեսպառ կատարեցան ի Քրիստոս»[45]։ Զրավարարվելով Թիֆլիսից բերված 600 գերիներին սմբակակոխ անելով, նա հրամայում է «շինել կրավանգ զուղղագիծ որմն միակողմանի և ի նմայ ծակս յիսուն երկու հանգոյն մորոց ձիաստանի այնքան նեղագոյն, յորում հազիւ մտցէ միայն գլուխ մի մարդոյ և անցուցեալ ի նմայ զգլուխ յիսուն երկու հայ իշխանաց, զոր խարէութեամբ կալեալ կապեալ էր, ի պարանոց նոցա կապեալ եռապատկեալ ճոպան, հանգուցիւք ամրացուցեալ ընդյագիս ամենի զորոց տա հարկանել զջորիս հատեալ զգլուխս նոցա կատարեցան ի Քրիստոս»[46]։

1796 թ. մարտ ամսին Շիրազի բնակչությունը ապստամբում է Ագա-Մուհամմադ խանի դեմ։ Նա շտապում է Սիրազ՝ ճնշելու իր դեմ ծագած այդ ապստամբությունը։

Անհետաքրքիր չէ նաև Օձնեցու այն տեղեկությունը, ըստ որի Թիֆլիսը պարսիկների կողմից ավերվելուց հետո Հերակլ արքան հնարավորություն չի ունենում այնտեղ վերադառնալու՝ քաղաքում մի կանգուն շենք չլինելու պատճառով։ Իսկ քանի որ արքունիքը ֆինանսական օգնաժամի մեջ էր գտնվում և գուրկ էր պալատներ կառուցելու հնարավորությունից, նա մնում է Թելավում, պատրաստել տալիս մի քանի անշուք սենյակներ, ուր և ապրում է մինչև իր կյանքի վերջը։

Ագա-Մուհամմադ խանի անօրինակ դաժանությունների շարքից Օձնեցին հաղորդում է ևս մի փաստ։ Երբ նրան լուր է հասնում, որ Հերակլ արքան ու Իբրահիմ խանը պաշարել են Գանձակի բերդը, հրամայում է Նախիջևանի և Երևանի խաներին՝ անմիջապես օգնության հասնել Գանձակի Ջավադ խանին և Մելիք Մեջլումին։ Սակայն սրանք տեղեկանալով Ջավադ խանի և նրա երկու ակառակորդների միջև արդեն կնքված հաշտության մասին, վերադառնում են իրենց երկրները։ Բայց արյունարբու շահը չի հանդուրժում Նախիջևանի Քյալբ Ալի խանի հապաղումը և իր մոտ հրավիրելով նրան՝ կուրացնում է։

1795 թ. օգոստոսին Ագա-Մուհամմադ խանի հրոսակախմբերի արշավանքներից հետո անդրկովկասյան երկրներում սաստիկ սով ու համաճարակ է սկսվում։ Սովը ահավոր չափերի էր հասել Արցախում, Սյունիքում և Գանձակում. այդ էր պատճառը, որ նշված վայրերի բնակիչները տեղից-տեղ էին կաղթում փրկվելու համար սովի ճիրաններից։ Նրանցից շատերն անցան Վրաստան, Սոմխեթի (Լոռի), Երևան, Ղարս, Մոկքոկ, Ղզլար, միջինասիական երկրներ։ Հետաքրքիր են ժամանակակիցների պատմածները այն մասին, որ Վրաստան և Սոմխեթի գաղթականներից շատերը դարձել էին վրաց թավադների ճորտերը։ «Ի զտոյրեալոզ անտի,— գրում է Օձնեցին,— տեսամ մեք զոմանս ուրմ պատմեցին մեզ զսաստիկութենէ սովոյն որք վաճառեալ էին ի ծնողաց իւրեանց ի Վրաստուն վասն հացի, զի մեկ անձն արու պատանեակ վաճառեալ էր երեսուն հօխայ կորեկի, զոր յուուրն մեր զնողն կանառեաց այլում երեմ հարիւր մանեք արծաթի. են ի նոցանէ որք տան զգինս իւրեանց տեառն և ազատեն զանձինս, և են որք բոզոքեն ի դատարանս տէրութեան վասն անպարտ պարտաւորութեան իւրեանց և բազում ծախիւք իբրև

43 Նույն տեղում։
44 Նույն տեղում, էջ 90բ։
45 Նույն տեղում, էջ 90բ։
46 Նույն տեղում, էջ 90բ—91ա։

օրինօք աղատին ի ձեռաց տեարց իւրեանց են և բազումք ի նոցանէ, որք այժմ տակաւին ծառայեն նոցա որդւոց յորդիսա»[47]։

Թիֆլիս քաղաքն ավերվելուց հետո, երբ Հերակլ արքան հրաշքով ազատվում է թշնամու ձեռքից, նա կրկին խնդրում է ռուսական կայսրության օգնությունը։ Սակայն հովանավորող Ռուսաստանի օգնությունը ուշացավ. ռուսները Վրաստան մտան միայն 1795 թ. դեկտեմբերի 15-ին։ Ռուսական արքունիքը չէր շտապում ընդառաջել Հերակլ արքայի խնդրանքին և Կովկասյան գծի հրամանատար Գուդովիչի միջնորդությանը՝ Վրաստանին օգնության հասնելու համար։ Պատմագրությունը ռուսների հապաղումը բացատրում է այն բանով, որ Ռուսաստանն ստիպված էր հաշվի առնել Թուրքիայի կարծիքը, որը թշնամաբար էր նայում ռուսական զորքի առաջխաղացմանն Անդրկովկասում։ Մյուս կողմից՝ միջազգային հարաբերությունների խճճվածությունը՝ կապված Լեհաստանի բաժանման հետ, հիմք էին ծառայում Ռուսաստանի զգուշավոր քաղաքականության համար։ Օձնեցին հետևյալ կերպ է նկարագրում ռուսական զորքերի ժամանման հանգամանքները։ «Ի սմին ժամանակի հազիվ թէ հասին զօրք ռուսաց օգնութիւն արքային վրաց զոր խնդրեալ էր Հերակլ ի յաւերման Տփխիսայ, քանզի ըստ հրամանի կայսրուհւոյն ընդ հրամանատարութեամբ գեներալ Օտինֆանտերի գրաֆ Վալերիանէ Զուրովոյ վաթսուն հազար զօրօք ռուսաց անցին ընդ ծովն Կասպից յԱղուանստան (իմա՝ Աղվանք—Ռ. Տ.), տիրեցին ծովեզերեայ քաղաքացն Դարբանդայ, Բաքուայ և հասեալ ի Շամախի քաղաք ձմերեցին ի Սալեան և ի Գանձակ. ընդ նոսա էր հայոց առաջնորդն Ռուսաստանու Յովսեփ արքեպիսկոպոսն Արղութեանց. որ անդէն մեկնեալ ի նոցանէ երթայ ի տեսութիւն հայրենի քաղաքն Տփխիսայ»[48]։ Օձնեցին հաղորդում է նաև մի ուշագրավ տեղեկություն, որ իբր 1797 թ. ապրիլի 10-ին մտնելով Թիֆլիս, Հովսեփ Արղությանը ականատես է լինում, թե ինչպես արհավիրքից փրկված բնակչությունը կրկին դառնում է իր սիրելի քաղաքը և լծվում նրա վերաշինության գործին։ 15 օր մնալով Թիֆլիսում, Արղությանը ուսումնասիրում է Թիֆլիսի ավերման փաստերը, շարադրում դրանք և տպագրում Նոր Նախիջևանի իր տպարանում։ Օձնեցու այս տեղեկությունը կարոտ է ճշգրտման։

Ռուս զորավար Զուրովի հաղթական արշավանքը դեպի Անդրկովկաս անօգնության ուրախություն պատճառեց տեղական հայ, վրացի և ադրբեջանցի բնակչությանը. տեղական խաները ևս շտապում են իրենց հավատարմությունը հայտնել. «Ընծայարեր լինէին տիրողքն երկրին յայնմիկ», ի թիվս որոնց և Դարբանդի խանը, որը ընծաներով և ռուսական կայսրության նկատմամբ իր հավատարմությունը ներկայացնող հատուկ վավերագրով իր որդի Արդուլ Ֆաթհ խանին ուղարկում է Զուրովի մոտ։ Նա արժանանում է կայսրուհու ողորմածությանը և ստանում թանկագին ակնեղենով զարդարված մի գավազան՝ Շուշիի գիտնական Ախունդ մոլլա Փանահին հանձնելու համար[49]։

1796 թ. նոյեմբերի 6-ին մահանում է Եկատերինա II կայսրուհին։ Նրա մահից ուղիղ մեկ ամիս անց կովկասյան հրամանատարությունը կարգադրություն է ստանում դադարեցնել ռազմական գործողությունները։ Անդրկովկասում գտնվող ռուսական զորամասերը նտ են կանչվում։ Պավել I կայսրը զանազան քաղաքական նկատառումներով հրաժարվում է Անդրկովկասում ակտիվ քաղաքականություն վարելուց։

Ռուսական զորքերի հեռանալուց հետո Պարսից շահը ծրագրում է կրկին արշավել դեպի Անդրկովկաս։ Նախապես հատուկ սուրհանդակ է ուղարկում Հերակլի մոտ. պահանջելով անվերապահ հպատակություն։ Օձնեցին մանրամասն նկարագրում է, թե ինչպես, երբ Պարսից սուրհանդակը ժամանում է Թիֆլիս, ժողովուրդը ցասումով քարկոծում է նրան։ Հերակլի խնդրանքով Վրաստանում թողնված ռուսական զորամասի հրամանատար Նելիդովը հազիվ է կարողանում սուրհանդակին փրկել վրեժխնդիր ժողովրդի ձեռքից։

1797 թ. մայիսի վերջերին Աղա-Մուհամմադ խանը մեծ զորաբանակով նորից շարժվում է դեպի Անդրկովկաս։ Մտնելով Ադրբեջան, նա մտադրված էր առաջին հերթին մահապատժի ենթարկել Բաքվի և Գանձակի խաներին՝ նրանց ռուսական կողմնորոշման, Զուրովի արշավանքի ժամանակ ռուսներին ցույց տված ջերմ ընդունելության համար։ Ադրբեջանի խաներին ծնկի բերելուց հետո նրա առաջնահերթ խնդիրն էր՝ կրկին արշավել ավերված Վրաստան և վերջնականապես նվաճել այդ երկիրը։

Ադրբեջանի խաները մոտալուտ կործանումից փրկվելու համար դավադրություն են սարքում Աղա-Մուհամմադ խանի անձի դեմ և պալատական ծառաների միջոցով սպանել են տա-

---

47 Նույն տեղում, էջ 92ա։

48 Նույն տեղում, էջ 92ա—92բ։

49 Նույն տեղում, էջ 93ա։

լիս նրան։ Հետաքրքիր մանրամասնություններ է պատմում Օձնեցին այս դավադրության նախապատրաստման և իրագործման մասին։

Այնուհետև Օձնեցին նկարագրում է Աղա-Մուհամմադ խանի գորքերի խուճապահար փախուստը դեպի Պարսկաստան. Շուշիի բնակչությունը հետամուտ է լինում պարսից հրոսակախմբերին, խլում այն ամենը, ինչ նրանք ավար էին առել իրենց երկրից, իսկ Իբրահիմ խանի եղբոր որդին՝ Մուհամմադ բեկը տիրանում է պարսից շահի գանձերին՝ իբրև երկրի տերն այդ օրերին, ապա Աղա-Մուհամմադ շահի գլուխը ոմն Թաֆիրեկի ձեռքով ուղարկում է Բելաքյան, ուր գտնվում էր Իբրահիմ խանը, որն իր հերթին ուղարկում է այն Հերակլ II-ին իբրև հաղթանակի նշան։

* * *

Վարդան Օձնեցու տեղեկությունները 1795—1797 թթ. պարսիկների Անդրկովկաս կատարած արշավանքի մասին, մեր կարծիքով, սկզբնաղբյուրի ուժ ունեն։ Նրանք հավաստում, լրացնում և կամ նոր խոսք են ասում անդրկովկասյան ժողովուրդների պատմության այդ կարևոր ժամանակաշրջանի մասին։

Վարդան Օձնեցու այդ աշխատություններում պարզորոշ ընդգծված են պարսից արշավանքի նախօրյակին անդրկովկասյան ժողովուրդների միմյանց շուրջը համախմբվելու, օտար նվաճողի, դեմ նրանց մղած միասնական պայքարի, նրանց դեպի Ռուսաստանը կողմնորոշվելու հետ կապված հարցերը։

1795—1797 թթ. Անդրկովկասում տեղի ունեցած ավերածությունները, կողոպուտներն ու գերեվարությունն ավելի քան աներկբա դարձրին այդ ժողովուրդների համոզմունքը ռուսական կողմնորոշում ընդունելու խնդրում, որի պատմական զարգացումը ի վերջո հանգեցրեց նրանց ազատագրությանը պարսկա-թուրքական դարավոր դաժան լծից։